

Առաջնությունը կարելի է համարել հաջողված. բացի հաղթանակած էտյուդներից կան նաև բավականին հետաքրքիր և լավ ստեղծագործություններ: Լավագույն էտյուդներն ընտրելուց հետո, առաջնության մրցավարական հանձնաժողովը արդյունքները մեկնաբանեց հետևյալ կերպ.

1-ին տեղ	Դ. Գուրգենիձե	Վրաստան
2-րդ տեղ	Է. Էյլագյան	Ուկրաինա
3-րդ տեղ	Մ. Կամպիտլի	Իտալիա
4-րդ տեղ	Ս. Դիդուխ	Ուկրաինա
5-րդ տեղ	Գ. Աման	Ավստրիա
6-րդ տեղ	Ա. Մանվելյան	Հայաստան

Պատվո գնահատականներ

- | | |
|------------------|--------------|
| 1. Յ. Բազլով | Ռուսաստան |
| 2. Ի. Մուրարաշու | Ռումինիա |
| 3. Յ. Տիման | Նիդեռլանդներ |
| 4. Օ. Պերվակով | Ռուսաստան |
| 5. Կ. Սումբատյան | Ռուսաստան |

Հավասար խրախուսական գնահատականներ

Ա. Ժուկով	Ուկրաինա
Ա. Պալիեր	Ֆրանսիա
Ս. Չիդեմյան	Հայաստան
Ջ. Խոբրնեկեր եվ Մ. Մինսկի	Գերմանիա
Ա. Յասիկ	Լեհաստան

Դավիթ Գուրգենիձե (Վրաստան)

I մրցանակ

Նախնական դիրք, որը հիշեցնում է փաստացի վերջնախաղ: Արդեն իսկ առաջին քայլը 1...Ka3! պարունակում է իր մեջ պարադոքսալ էլեմենտ, արքան չի խուսափում կապից՝ 1...Rg3 քայլից հետո: Հանկարծ մի անակնկալ պահ. հրաժարվում է վերցնել a2 զինվորը 2.Kb2!!, որը շարունակվում է կեղծ հետքով 2.K:a2? R:d3 3.K:a1 Rb3 4.Ka2 Rb5 5.Ka3 Kd2 6.Ka4 Rb1 7. Rd4+ Kc3 8.R:d5 Kc4 մատ կամ նավակի կորուստ:

2. ... R:d3 3.K:a1 Ra3 (3... Rb3 4.Rh1+ Kf2 5.Rh2+ Kg3 6.Rh5! Rb5 7.Rf5!!)

4.Rh1+ Kf2 5.Rh2+ Kg3 5.Rh5 d4 7.Rd5 Ra4 8.Rf5 d3 9.Rd5 Ra3 10.Rf5 և դիրքային ոչ ոքի:

Դիրքային ոչ ոքի, որին հետևում են 3 դիրքեր, երբ արքան միշտ կտրված է:

Էդուարդ Էյլագյան (Ուկրաինա)

II մրցանակ

Տվյալ էտյուդի հեղինակը երկար ժամանակ աշխատում է կեղծ հետքերի փոփոխման թեմայի շուրջ (տես “Փոփոխությունները էտյուդում” հոդվածը), որը տպագրվել է “Շախմատային էտյուդներ” ամսագրում N82, N83, 2008թ.: 1.Bb1! Be5 2.B:e4 քայլերից հետո պետք է խաղալ 3.ab! (ոչ թե 3.a5? որը համարվում է կեղծ հետք): Եթե 1.Bb1! քայլից հետո սևերը խաղում են 1...Be3+! 2.Kpg7! Bf4 3.B:e4+ Kp:e4, ապա այս դեպքում հաղթանակի է տանում 4.a5! (ոչ թե 4.ab?): էտյուդի գլխավոր թեման կեղծ հետքի փոփոխությունն է: Այստեղ տեխնիկական տեսանկյունից սա հասարակ խնդիր չէ, որը հստակ երևում է տրամաբանական էտյուդի ձևով երկու կողմերի հնարամիտ ստեղծագործական խաղի ժամանակ: Թեմայի պարադոքսալությունն ընդգծվում է նաև նրանով, որ իրադարձությունները, որոնք տեղի են ունենում խաղատախտակի մի ծայրում, ունեն որոշիչ նշանակություն խաղատախտակի մյուս ծայրում ճիշտ քայլերի ընտրության համար:

Մարկո Կամպիոլի (Իտալիա)

III մրցանակ

Մի քանի հետաքրքիր քայլերից հետո նավակային վերջնախաղը, որը պարունակում է 5.Kb8!!, քայլը բերում է մի դրության, որտեղ սպիտակ նավակը անցողիկ ուժեղ զինվորի հետ պայքարում, կատարում է ճշգրիտ 7.Rd7!! քայլը, որից հետո արքան կատարում է 10.Ka8!! քայլը: Հարկավոր է նաև նշել սիստեմատիկ 10...h6! 11. Rb6!. 11...h5! 12.Rb5! քայլերը, որոնք հնարավորություն են տալիս ոչնչացնել “h” և “b” զինվորներին:

Սերգեյ Դիդուխ (Ուկրաինա)

IV մրցանակ

Վերածնված խաղաքարերի պայքար 2...Nc8! 3.g8-Q! 4.Kc5!, որտեղ սևերը հավասար պայքարի ժամանակ, հանգեցնում է են մի դրության, որտեղ սևերը կորցնում են թագուհին սպիտակ ձիերի պատառաքաղի օգնությամբ: Միայն խաղի վերջում է երևում 4.Kc5! քայլի նրբությունը. սպիտակ արքան օգնության է գալիս g2 և g3 զինվորներին: էտյուդում հաջող է օգտագործված նյութը և բացակայում են ապացուցված տարբերակները:

Գունտեր Աման (Ավստրիա)

V մրցանակ

Ակնհայտ երևում է այս էտյուդի հեղինակի ուժը, ով կարողացել է նավակն ու ձին ընդդեմ թագուհու ճիշտ համագործակցության ժամանակ, փոխադարձ ցուզցվանգի դեպքում գտնել հետաքրքիր շարունակություններ, որոնցից են 4.Ka8!!, 7.Ka7!, 10.Kb8! քայլերը, որը թույլ է տալիս ոչնչացնել “c4” զինվորին և բաց չթողնել թագուհուն:

Ալեքսանդր Մանվելյան (Հայաստան)

VI մրցանակ

Տեխնիկապես դժվար խնդիր է բոլոր սև խաղաքարերը ներառել կարևորագույն դաշտերի վրա, որին կարելի է հասնել անխուսափելի քայլերի միջոցով, բայց վերջնական դիրքային ոչ ոքին իրենից ներկայացնում է բավականին հետաքրքրություն, ինչպես նաև կեղծ հետքը՝ 6.Bc8+? քայլը 6.Be6+ քայլի փոխարեն:

ՊԱՏՎՈ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

Յուրի Բազլովի (Ռուսաստան) էտյուդը սկզբնական դրությունից հետո գալիս է մի դիրքի, որտեղ սպիտակները, տալով փիղը, թվում է կորցնում են հաղթելու բոլոր հնարավորությունները: Սակայն, շնորհիվ մի քանի հստակ քայլերի սպիտակներին հաջողվում է ստեղծել մատային վտանգներ՝ շահելով սևերի նավակը:

Իոն Մուրաբաշուի (Ռումինիա) էտյուդը իր մեջ պարունակում է սևերի հետաքրքիր հակախաղ պատային դրություն ստանալու համար, սակայն սպիտակները հստակ քայլերով հաղթահարում են դա:

Յան Տիմանի (Հոլանդիա) էտյուդում սևերը փորձում են օգտագործել անցողիկ զինվորի ուժը, սակայն նույնիսկ սև թագուհու վերածնունդից հետո, սպիտակները շնորհիվ 4.Bd4! սրամիտ քայլի՝ վերջնախաղում սպիտակները փրկվում են:

Օլեգ Պերվոկովի (Ռուսաստան) էտյուդը պարունակում է իր մեջ հետաքրքիր տրամաբանական 4.Qc3! քայլ, որով սպիտակները ստիպում են սևերին վերցնել g2 զինվորին, որով էլ ազատում են դաշտը սպիտակների թագուհու որոշիչ քայլի համար:

Կարեն Սումբատյանի (Ռուսաստան) էտյուդում հետաքրքիր է և առաջին 1.g5! քայլից, երբ սպիտակները զոհաբերում են զինվորին, և 7.c3! քայլը, որով սպիտակները վերջնական դիրքում դժվարություններ են ստեղծում սև թագուհու համար:

Այն հինգ էտյուդները, որոնք ստացել են հավասար խրախուսական գնահատականներ, իրենց մեջ պարունակում են հետաքրքիր մտքեր էտյուդի լուծման ընթացքում կամ վերջնական դիրքերում, այդ իսկ պատճառով առաջնության մրցավարական հանձնաժողովը դրանք չտարբերակեց:

Առաջնության գլխավոր մրցավար – Վ. Հակոբյան

Գլխավոր մրցավար – Ա. Գասպարյան

03.06.2010թ.